

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7.

ԵՂՂ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

21 մայիսի 2020թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Բ.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամները և տնօրենի պաշտոնակատար պ-ն  
Ա.Մակարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական աշխատանքների պաշտպանության կազակերպում:
2. Քննությունների առցանց ձևաչափով անցկացնելու մասին:
3. Ընթացիկ հարցեր

*/զեկ. Մ.Զաքարյան/*

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի  
ղեկանի Ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի  
հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Մ.Զաքարյանը:

**1. ԼՍԵՑԻՆ- Ավարտական աշխատանքների պաշտպանության կազմակերպում:**

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Մ.Զաքարյանը: Նա ներկայացրեց,  
որ ավարտական աշխատանքների պաշտպանություն իրականացվելու է Ի/ԿՄ կրթական  
ծրագրով ինֆորմատիկա և քարտեզագրություն և Կ/Գ կրթական ծրագրով  
աշխարհագրություն մասնագիտություններից: Պաշտպանությունը իրականացվելու է  
ZOOM հարթակում: Յուրաքանչյուր ուսանողի պատասխանին տրամադրվելու է 20 րոպե,  
ընդմիջումը 13:00-13:40:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-: Պ-ն Մակարյանը ներկայացրեց, որ ZOOM-ի լիցենզավորված լինք է տրամադրելու ԵՊՀ-ն, որպեսզի ժամանակից կախված չընդհատվի: Կազմակերպիչը և ամբիոնի գործավարը կլինեն համալսարանում, նույն սենյակում: Ուսանողների հետ հեռախոսակապը կիրականացնի տեխնիկական կազմակերպիչը, որպեսզի տեխնիկական խնդիրների դեպքում արագ լուծում տրվի:

Քննարկման ընթացքում խնդիր առաջացավ, թե արդյո՞ք հանձնաժողովը պետք է նախապես գնահատում իրականացնի: Ղեկավարի կարծիքը և գրախոսի դիտողություններն ու կարծիքը նախապես բարձրաձայնել, թե՞ ոչ:

Ներկանները քննարկեցին գնահատման ընթացակարգը, ներկայացրեցին առաջարկներ:

Գ.Միմոնյանը առաջարկեց գրախոսների դիտողություններով աշխատանքները առանձնացվի ցուցակով, նախապես:

Ա.Հովակիմյանը առաջարկեց գնահատականները հստակեցնել հանձնաժողովի կողմից, գնահատման ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ-

Հանձնարարել ամբիոնի գործավարին նախապես ուղարկել հանձնաժողովի անդամներին.

1. ավարտական աշխատանքների հաստատված թեմաները, աշխատանքները, կարծիքները, գրախոսությունները
2. ZOOM-ի լիցենզավորված լինքը
3. Ցուցակով առանձնացված դիտողություններով գրախոսությունները: Չայնը տրվի հանձնաժողովի նախագահին գրախոսի դիտողությունը ուսանողին ներկայացնելու, ով կարտահայտվի դիտողության վերաբերյալ:

2. ԼՍԵՑԻՆ - Քննությունների առցանց ձևաչափով անցկացնելու մասին:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը ներկայացրեց, որ կիսամյակի քննությունների գրաֆիկը տեղադրված է կայքում, քննությունները ՕնԼին է, օրերի տեղաշարժ չի թույլատրվում, բացառիկ խիստ անհրաժեշտության դեպքում պետք է նախապես տեղեկացնել: Բոլոր բանավոր քննությունները և գրավոր

քննությունների քննարկումները պետք է ձայնագրվեն և ուղարկվեն ուսումնական վարչություն, Պ-ն Դավթյանին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Մ.Զաքարյանը առաջարկեց արտակարգ իրավիճակներ պայմաններում արհեստականորեն չմեղմացնել քննությունները:

Ա. Հովակիմյանը նշեց, որ քանի որ ընթացիկ քննություններ հանվում են, ապա անհրաժեշտ է հաշվի առնել դասերի ընթացքում ցուցաբերած ակտիվությունը, նախապես հանձնարարված ինքնուրույն աշխատանքները:

Յուրաքանչյուր դասխոս ներկայացրեց իր արտակարգ իրավիճակների պայմաններում իր գնահատման ընթացակարգը:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Բոլոր բանավոր քննությունները և գրավոր քննությունների քննարկումները ձայնագրել և ուղարկել ուսումնական վարչություն:

**ԼՍԵՑԻՆ-** Գ.Ս.Սիմոնյանի և Ա.Շ.Մարգարյանի «Ձայնի մոնիտորինգ» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Մ. Զաքարյանը ներկայացրեց, որ ձեռնարկը նախատեսված է ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետների ուսանողների համար, ինչպես նաև Էկոլոգիական անվտանգության հետ առնչվող հետազոտողների համար: Գրախոսել է տեխ.գ.թ., դոկտոր, պրոֆեսոր Գ.Պ. Փիրումյանը:

Գ.Սիմոնյանը հավելեց, որ ձայնի հետ կապված մոնիտորինգ կիրառվում է նաև կուրսային և ավարտական աշխատանքներում: Ձայնաչափը առկա է ֆակուլտետում: Ձայնաչափով ձայնը չափվում է տարբեր միջավայրերում: Ձեռնարկում ներկայացված է աղմուկի տեսական գնահատման և չափման օրինակներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության և ներկայացնել ԵՊՀ ԻՄ մեթոդխորհրդի հաստատմանը:

ՆԱԽԱԳԱՀ

Մ.Ա.ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ